Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան N2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Աշխարհագրություն» /4 դասաժամ/, «Ֆիզկուլտուրա» /14 դասաժամ/, «Բնագիտություն» / 3 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. հունվարի 23-ից մինչև փետրվարի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 14:30-ից մինչև 19:00-ը, բացի կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2026թ. փետրվարի 11-ին՝ ժամը 15:00-ին**, **Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան N2 միջնակարգ** դպրոցում, հասցե՝ գ. Սարուխան, Հ. Աբրահամյանի փողոց 121: Տեղեկությունների համար զանգահարել 094-85-64-12 հեռախոսահամարով: